ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-9

ԵՊՀ ԻՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29. 06. 2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստին մասնակցում էին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար պր. Ա. Ցուցուլյանը և խորհրդի 13 անդամ:

Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2018-19 ուս. տարվա գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվություն /Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/ :
2. Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2019թ.-ի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքների քննարկում: /Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/ :
3. ԿԾ պատասխանատուների 2018-19 ուս. տարվա գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն / Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. ՈՒլիխանյան/:
4. 2018-19 ուս. տարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ամփոփում / Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում /2019-2020/:/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան /:
6. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային բեռնվածությունների քննարկում և հաստատում: /Զեկ. Գ.Ավետիսյան/:

1. *Լսեցին- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2018-19 ուս. տարվա գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվությունների մասին /Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/ :*

Լսեցին- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն վարիչի պաշտոնակատար Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտություն» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն հաստատված ամբիոնի աշխատանքային պլանի: Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածությունների շրջանակում և հիմնականում կատարել են այն պահանջները, որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերով. ուսումնական պլանի համաձայն անհրաժեշտ ծավալի դասաժամերով կարդացվել են դասախոսություններ, անց են կացվել սեմինար ու գործնական պարապմունքներ, ինչպես նաև համապատասխան ընթացիկ ու ամփոփիչ քննություններ և ստուգումներ: Կատարվել են դասալսումներ, փորձի փոխանակում, համատեղ սեմինարներ, որոնց վերաբերյալ անցկացվել են քննարկումներ համապատասխան ամբիոնի նիստերում: Ամբիոնի դասախոսների կոցմից հրապարակվել են 9 գիտական հոդված:

Հաշվետու ուստարում ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ Գ. Ավետիսյանը ՀՀ ԲՈԿ-ի կողմից ստացել է դոցենտի կոչում: Ա. Սաիբեկյանը և Ա. Ալեքսանյանը ԵՊՀ Իմ կողմից ստացել են ասիստենտի կոչում:

Լսեցին.- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ 2018-2019 ուս. տարում «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնի ժամերը բաշխվել է ամբիոնի 11 դրույքով և 4 ժամավճարային հիմունքներով հրամանագրված աշխատակիցների միջև: Ամբիոնի գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար կազմվել են աշխատանքային գրաֆիկները և ժամանակացույցերը: Ամբիոնում իրականացվել է ավարտական և կուրսային աշխատանքների բաշխում: Ներկայացվել է դասախոսի անհատական զարգացման պլանը, կատարվել է փոխադարձ դասալսումներ: Երիտասարդ դասախոսների համար իրականացվել է խորհրդատվություն, մասնավորապես ուսումնական փաթեթի կազման

վերաբերյալ: Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվել են դասալսումներ, անյուհետև արդյունքերի քննարկում, տրվել են կոնկրետ լուծումներ: Ամբիոնի ուշադրության կենտրոնում է նաև դասախոսների գիտական գործունեությունը:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը

Նա նշեց, որ ամբիոնների վարիչները լուրջ վերաբերմունք դրսևորեն դասախոսների գիտական աշխատանքների նկատմամբ: Հնարավորիս հետամուտ լինեն ուսումնա-մեթոդական հրապարակումների մասնակցությանը: Հրապարակումները լինեն ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հանդեսներում:

Որոշեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2018-19 ուս. տարվա ամբիոնների վարիչների աշխատանքները գնահատել բավարար:

2. ***Լսեցին.- Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2019թ.-ի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքների քննարկման մասին: /Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/ :***

Մ. Միքայելյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհանցնում են, քանի որ գերազանց գնահատական են ստացել ինը ուսանող, բավարար՝ երեքը, իսկ մնացածը՝ լավ: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ նախապես կազմակերպված նախապաշտպանության ընթացքում բացահայտվել են թերությունները, շտկվել են բացթողումները: Ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքում ուսանողները լիովին տիրապետում էին իրենց թեմային և կարողանում էին պատշաճ ներկայացնել:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքերը՝ նշելով, որ ընդհանուր առմամբ գոհացնող են: Սակայն որպես թերություն նշեց, աշխատանքներում ինքնուրույնության պակասը, թույլ վերլուծական մտքը բացակայությունը: Նա նշեց նաև, որ այդ ամենը նախապաշտպանությանը ոչ բավարար մոտեցումն էր:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը:

Նա նշեց, որ «Տնտեսագիտություն» մասնագիտության ավարտական աշխատանքերի պաշտանության արդյունքները գոհացնող են, քանի որ թեմաները ընտրելուց հետո

ուսանողները ուղորդվել են պրակտիկայի այն վայրերը, որտեղ իրենք կարող էին ինքնուրույն կատարել վերլուծություն:

Որոշեցին.- Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2019թ.-ի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքները ընդունել ի գիտություն:

3. *Լսեցին.- ԿԾ պատասխանատուների 2018-19 ուս. տարվա գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության մասին / Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ռիլիխանյան/:*

Լսեցին.- «Ֆինանսներ» ԿԾ պատասխանատու Ա. Սարիբեկյանին:

Ա. Սարիբեկյանը նշեց, որ 2018-2019 ուս տարվա ընթացքում կատարված աշխատանքները բխել են «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրերի ղեկավարի աշխատանքային պլանի համաձայն, որը ելնում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրից, մասնաճյուղում գործող կանոնակարգերից, ՏՖ կանոնադրությունից, աշխատանքային պլանից և «Ընդհանուր տնտեսագիտություն» ամբիոնի աշխատանքային պլանից: Ա. Սարիբեկյանը արժևորելով դասընթացի փաթեթների դերը, նշեց, որ հատուկ ուշադրություն է դարձված դրանց կատարմանն ու կատերալագործմանը: ԿԾ պատասխանատուն ներկայացրեց նաև 2019-2023 թթ. ուս.տարվա «Բակալավրիատի ուսումնական պլանը», որը կազմվել է 2018 – 2022 թթ. ուստարվա պլանի հիման վրա, որոշակի փոփոխություններով: Նա նշեց, որ փոփոխությունները կատարվել են դասախոսական անձնակազմի, ուսանողների հետ քննարկումների, բեչմարքինգի և «Բակալավրիատի ուսումնական պլան»-ին ներկայացվող նորմատիվների հիման վրա: Փոփոխությունները կբարելավեն ուսման որակը և կնպաստեն ուսանողների հետաքրքրվածությանը դեպի մասնագիտությունը: Երկրորդ մասնագիտական պրակտիկան հնարավորություն կտա ձեռք բերել գործնական հմտություններ, ստեղծել տեղեկատվական բազա և կողմնորոշվել նախադիպլոմային մասնագիտական պրակտիկայի վայրի ընտրության հարցում: Ա. Սարբեկյանը նշեց, որ ունեցել եք այցելություն ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, որից 2-ը ճանաչողական այց, 3 -ը սեմիար- պարապումք դասընթացներից դուրս: Իսկ 2 /երկու/ կուրսում երեք առարկայից իրակացվել է մնացորդային գիտելիքի ստուգում:

Լսեցին.- «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատու Ա. Ուլիխանյանին

Ա. Ուլիխանյանը նշեց, որ 2018-2019 ուս տարվա ընթացքում ԿԾ պատասխանատուի կատարված աշխատանքները բխել են «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրերի ղեկավարի աշխատանքային պլանի համաձայն, որը ելնում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրից, մասնաճյուղում գործող կանոնակարգերից, ՏՖ կանոնադրությունից, աշխատանքային պլանից և տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի աշխատանքային պլանից: Պարբերաբար կազմակերպվել են փոխադարձ դասալսումներ՝ դասավանդման առաջավոր փորձի փոխանակման նպատակով: Մշակվել է ուսանողների կարիերային նպաստող լրացուցիչ պրակտիկայի (ինտերշիփ) իրականացման ծրագրեր /այցելություն Գոշի լիճ, Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնա-հետազոտական կենտրոն/: Կազմակերպվել են ուսանողների այցելություններ մարզի տարբեր ձեռնարկություններ՝ուսումնական պրակտիկաների շրջանակում, հանդիպում է կազմակերպվել Խաշթառակի միջնակարգ դպրոցի ավարտական դասարանների աշակերտների հետ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով:

Որոշեցին.- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատուների 2018-19 ուս. տարվա աշխատանքները գնահատել բավարար:

4. *Լսեցին.- 2018-19 ուս. տարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ամփոփման մասին / Զեկ. Գ. Ավետիսյան/:*

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2018-19 ուս. տարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ամփոփագիրը: Նա նշեց, որ ֆակուլտետում ընթացիկ քննություններին ու ստուգումներին մասնակցել է 74 ուսանող: Ընթացիկ քննությունների միջին գնահատականը ֆակուլտետում 2,94 է, ընթացիկ ստուգումների միջին գնահատականը 7,20: Արդյունքները քննարկվել է ուսանողների հետ, գրավոր բողոք չի ներկայացվել: Երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների կտրվածքով իրականացվել է վերլուծություն, ըստ որի ստացել ենք ամբողջական պատկեր: Վերլուծությունը մանրամասն ըստ դասընթացների քննարկվել է ամբիոններում:

Արտահայտվեցին.- ԵՊՀԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցույանը

Ա. Ցուցուլյանն անդրադարձավ, բոլոր այն հարցերին, որոնք քննարկվել են: Նա շեշտը դրեց մնացորդային գիտելիքի ստուգման գործընթացին, քանի որ այն վեր է հանում ուսուցման, մեթոդական, բովանդակային թերությունները: Լրացուցիչ պրակտիկայի կազմակերպումն անհրաժեշտ է կազմակերպել նախապես ծրագրավորված, որը հստակ կարտացոլի ժամանակացույցը, վայրը, մասնակիցների թիվը և ծախսերը:

Զբոսաշրջություն մասնագիտության վերաբերյալ ներկայացրեց իր դիրքորոշումը՝ կարևորելով օտար լեզվի իմացությունը: Նա նշեց նաև, որ կրթական ծրագրի պատասխանատուները պետք է հստակ հետևեն վերջարդյունքերի ձևավորմանը:

Ա. Ցուցուլյանը կարևորեց նաև «MOODLE» ծրագրի իմացությունը՝ նշելով յուրաքանչյուր դասախոս պետք է մեկ դասընթաց իրականացնի հենց այդ ծրագրով:

Որոշեցին. - 2018-19 ուս. տարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները ընդունել ի գիտություն:

5. ***Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում /2019-2020/: / Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/***

Լսեցին – Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը նշեց, որ 2019-2020 ուս. տարվա «Ֆինանսներ» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երեք տարիների ուսումնական պլաններից, իսկ չորրորդ կուրսի ուսումնական աշխատանքային պլանը՝ 2016 - 2020 ուս. տարվա «Տնտեսագիտություն» մասնագիտության ուսումնական պլանից: 2019 - 2020 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնի աշխատանքների կազմակերպման համար, որովհետև դրա հիման վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների աշխատանքները:

Նա նշեց, որ 2019 - 2020 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2019-2020 ուս տարվա «Զբոսաշրջություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երեք տարիների ուսումնական պլաններից, իսկ չորրորդ կուրսի ուսումնական աշխատանքային պլանը՝ 2016 - 2020 ուս. տարվա «Սերվիս» մասնագիտության ուսումնական պլանից:

Արտահայտվեցին – Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը

Արտահայտվողները նշեցին, որ ներկայացված աշխատանքային ուսումնական պլանների նախագծերը ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին– հաստատել Ֆակուլտետի «Ֆինանսներ»,«Տնտեսագիտություն», «Զբոսաշրջություն» և «Սերվիս» մասնագիտությունների 2019-2020 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը և ներկայացնել ԵՊՀԻՄ գիտխորհրդի հաստատման:

6.Լսեցին.-Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային բեռնվածությունների մասին: /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Լսեցին - Գ. Ավետիսյանին

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի հաստատման է ներկայացվել Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառարվարման և մշակութաբանության ամբիոնների ամբիոնային բեռնվածությունները, որոնք կազմվել են ուսումնական աշխատանքային պլանների հիման վրա և քննարկվել են համապատասխան ամբիոններերում:

Արտահայտվեցին – Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեցին, որ ամբիոնային բեռնվածությունները քննարկվել են ամբիոններում, նկատառումներ չեն եղել պայմանավորված այն հանգամանքով, որ ամբիոններում քննարկվել և կարգավորվել են և ուսումնական (2019-23թթ.), և աշխատանքային ուսումնական պլանները (2019-2020ուստարի): Ուստի առաջարկեցին հաստատել ամբիոնային բեռնվածությունները:

Որոշեցին– Հաստատել Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառարվարման և մշակութաբանության ամբիոնների ամբիոնային բեռնվածությունները:

Գիտական խորհրդի նախագահ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար *Ա. Ալեքսանյան*